Հավելված 6
«Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/2 »* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Վ1Պ-ԳՀԱՊՁԲ-20/2 - 2

ք. Վանաձոր «10» 01 2020 թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ Պ ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Վ.Ս. Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Վիոլա ՍՊԸ-ն, ի դեմս տնօրենի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1197840 / մեկ միլիոն հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր քառասուն /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետները խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 10.01.2020 թ-ից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[22] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև եվ Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ | «Վիոլա» ՍՊԸ |
| Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 | Ք.Երևան, Ավան, Աճառյան փ. |
| <Ինեկոբանկ>Վանաձոր մ/ճ | 2-րդ նրբ. թիվ 3 |
| | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| | ՀՀ 1570001092880100 |
| Հ/Հ 2050223000451001 | ՀՎՀՀ 00801026 |
| ՀՎՀՀ 06907013 | Տնօրեն՝ Ա.Մեժլումյան |
| Տնօրեն՝ Վ.Ս. Օհանյան | |
| ________________ Կ.Տ | ________________ |
| ստորագրություն | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[24] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
« 10 » 01 2020 թ. կնքված
Վ 1 ԴԳՀԱՊՁԲ-20/2 -2 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը *** |
| 1 | 33691162 | ԱԼԱՏ-ի հավաքածու | ԱԼԱՏ-ի հավաքածուն մ պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ Օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը :Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ:Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված հավաքածու ALAT՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*60 մլ: ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ Ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 3 480 | 17 400 | 5 | Ք. Վանաձոր, Միասնիկյան 17 | 1 եռ-3<br>3 եռ-2 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 3 | 33691162 | ԱՍԱՏ-ի որոշման համար նախատեսված հավաքածու | ԱՍԱՏ-ի որոշման համար նախատեսված հավաքածու ASAT՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*60 մլ: ԱՍԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 3 480 | 17 400 | 5 | Ք. Վանաձոր, Միասնիկյան 17 | 1 եռ-3<br>3 եռ-2 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 | | | | | | | | | |
| 8 | 33691162 | Հեմոգլոբին | Հեմոգլոբին որոշման համար նախատեսված հավաքածու Hemoglobin՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածուում 1000 մլ : Հեմոգլոբինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: | Renam Ռուսաստանի Դաշնություն | հատ | | 3 960 | 71 280 | 18 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-9 3 եռ-9 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 9 | 33691162 | Ալֆա ամիլազաի որոշման համար Նախատեսված հավաքածու Kinetic | Ալֆա ամիլազաի որոշման համար Նախատեսված հավաքածու AMYLASE՝ նախատեսված բաց համակարգի համար: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածուում 4*60 մլ: Ալֆա ամիլազաի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | | 23 040 | 23 040 | 1 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | | | | | | | | |
| 10 | 33691162 | Կետոնների որոշմոն թեստ | Ախտորոշող թեստ ստրիպային համակարգ` բիոքիմիական անալիզի համար:թեսթ-ստրիպների հավաքածու: տեստերի քանակը 100 թեսթ: Հանձնելու պահին մնացորդային Պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության Ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% ,1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` | DFI Co. Ltd Հարավային Կորեա | հատ | 5 160 | 5 160 | 1 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 11 | 33691162 | Տրիգլիցերիդներ | Տրիգլիցերիդը որոշման համար նախատեսված հավաքածու TG` նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*120 մլ: Տրիգլիցերիդը հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային Պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության Ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող Ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 16 560 | 66 240 | 4 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-2<br>3 եռ-2 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | | | | | | | | |
| 12 | 33691162 | Թ ի ր ե ո տ ր ո պ հ ո ր մ ո ն ի ո ր ո շ մ ա ն հ ա մ ա ր ն ա խ ա տ ե ս վ ա ծ հ ա վ ա ք ա ծ ո ւ | Թիրեոտրոպ հորմոնի որոշման համար նախատեսված հավաքածու TSH` նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ իմունոֆերմենտատիվ որոշման եղանակով: Ֆորմատ:Տուփ 96 որոշում/թեստ/, 1հատ=1 տուփ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա: TSH -ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել իմունոֆերմենտատիվ վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս:Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | ООО НПО Диагностические системы Ռուսաստանի Դաշնություն | հատ | 24 840 | 124 200 | 5 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-2 3 եռ-3 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 13 | 33691162 | Ը ն դ հ ա ն ո ւ ր ս պ ի տ ա կ ո ւ ց | Ընդհանուր սպիտակուցի որոշման համար նախատեսված հավաքածու TOTAL PROTEIN` նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 1 տուփ = 240 թեստ: Ընդհանուր սպիտակուցի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% ,1-2տարի պիտանելության ժամկետ | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 2 760 | 2 760 | 1 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 հատ=1տուփ | | | | | | | | |
| 14 | 33211120 | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված հավաքածու | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված հավաքածու GLUCOSE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 4*100 մլ: Գլյուկոզայի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 4 400 | 79 200 | 18 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 էտ-9<br>3 էտ-9 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 15 | 33211140 | Բիլիռուբինի (ընդհանուր) որոշման համար նախատեսված հավաքածու | Բիլիռուբինի (ընդհանուր) որոշման համար նախատեսված հավաքածու BIL Total՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը ոչ պակաս քան 100/100 ml: Բիլիռուբին (ընդհանուր) հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան | հատ | 4 500 | 9 000 | 2 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 էտ-1<br>3 էտ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային Պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% ,1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | | |
| 16 | 33211150 | Միզանյութի որոշման համար Նախատեսված հավաքածու | Միզանյութի որոշման համար նախատեսված հավաքածու UREA՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*120 մլ: Միզանյութի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% ,1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | Lab-Care Diagnostics Ltd Չնդկաստան | հատ | 5 400 | 32 400 | 6 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-3<br>3 եռ-3 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 17 | 33211160 | Կրեատինինի որոշման համար Նախատեսված հավաքածու | Կրեատինինի որոշման համար նախատեսված հավաքածու CREATININE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*120 մլ: Կրեատինինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 3 120 | 21 840 | 7 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-3<br>3 եռ-4 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | | | | | | | | | |
| 22 | 33211230 | Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածու | Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածու (Syphilis RPR):<br>Մեթոդ ագլյուտինացիոն եղանակով:<br>Ստուգվող նմուշ`<br>արյան շիճուկ: Մեկ հավաքածույում թեստերի քանակը<br>100թեստ : Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածուն<br>պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ<br>օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը:<br>Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2<br>տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների<br>համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների<br>համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ`<br>ISO13485<br>1հատ=1տուփ/ 100 թեստ/ | Lab-Care Diagnostics Ltd Չնդկաստան | հատ | 4 440 | 26 640 | 6 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-3<br>3 եռ-3 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 25 | 33211300 | Խոլեստերին | Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ:<br>Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*120 մլ: Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 5 520 | 138 000 | 25 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-12<br>3 եռ-13 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | | | | | | | |
| 26 | 33211300 | Կալցիում | Մեթոդ Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 2*120 մլ: Կալցիումի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | PZ Cormay S.A. Լեհաստան | հատ | 4 680 | 46 800 | 10 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-5<br>3 եռ-5 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 27 | 33211310 | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու TG` նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում տարաների ծավալը 6*10 ml: Թրոմբոպլաստինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` | TAIZHOU STEELLEX BIOTECH CO., LTD Չինաստան | հատ | 27 360 | 191 520 | 7 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-3<br>3 եռ-4 | Հունվար-դեկտեմբերի 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | | | | | | | | |
| 33 | 33691162 | TSH որոշման թեստ-հավաքածու | Տիրոտրոպինի քանակական որոշման թեստ հավաքածու TSH: Մեթոդ: իմունոֆերմենտային անալիզ: Ֆորմատ: 96 որոշում (12x8 քջիջ): Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 13485: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only | ООО ,НПО ' Диагности ч еские системы' Ռուսաստանի Դաշնություն | հատ | 24 840 | 124 200 | 5 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-3<br>3 եռ-2 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 34 | 33691162 | T4 որոշման թեստ-հավաքածու | Թիրոքսին T4 քանակական որոշման թեստի ավաքածու: Մեթոդ: իմունոֆերմենտային անալիզ: Ֆորմատ: 96 որոշում (12x8 բջիջ) : Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO13485: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only | ООО ,НПО ' Диагности ч еские системы' Ռուսաստանի Դաշնություն | հատ | 24 840 | 99 360 | 4 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-2<br>3 եռ-2 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 35 | 33691162 | Ազատ Թ ի ր ո ք ս ի ն T4 free քանակական որոշման թեստ-հավաքածու | Ազատ Թիրոքսին T4 free քանակական որոշման թեստի ավաքածու կամ համարժեքը: Մեթոդ: իմունոֆերմենտային անալիզ: Ֆորմատ: 96 որոշում (12x8 բջիջ) : Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO13485: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only | ООО ,НПО ' Диагности ч еские системы' Ռուսաստանի Դաշնություն | հատ | 24 960 | 24 960 | 1 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 36 | 33691162 | Ազատ 3,5,3 - Տ ր ի յ ո դ թ ի ր ո ն ի ն T3 քանակական որոշման թեստ-հավաքածու | Ազատ 3,5,3 - Տրիյոդթիրոնինի T3 քանակական որոշման թեստ-հավաքածու T3 Free: Մեթոդ: իմունոֆերմենտային անալիզ: Ֆորմատ: 96 որոշում (12x8 μջիջ) : Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO13485: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only | ООО ,НПО ' Диагности ч еские системы' Ռուսաստանի Դաշնություն | հատ | 24 840 | 24 840 | 1 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի 25 |
| 37 | 33691162 | Թ ի ր ո ի դ պ ե ր ո ք ս ի դ ա զ | Թիրոիդ պերոքսիդազի նկատմամբ հակամարմիններ: | ООО ,НПО ' Диагности | հատ | 25 800 | 51 600 | 2 | Ք. Վանաձոր, Մյասնիկյան 7 | 1 եռ-1 | Հունվար-դեկտեմբերի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ի ն կ ատմ ամ բ հ ակ ամ ար մ ի ն ն ե ր : | : Թիրեոպերօքսիդազայի նկատմամբ որոշման համար նախատեսված հավաքածու հակա- TPO՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ իմունոֆերմենտատիվ որոշման եղանակով: Ֆորմատ:96 որոշում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: TPO -ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել իմունոֆերմենտատիվ վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 :1 հատ=1 տուփ/96 թեստ/ | ческие системы' Ռուսաստանի Դաշնություն | | | | | | 3 եռ-1 | 25 |

* *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կապարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** *Եթե իրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

## Ծանոթություն

ա. 2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերի հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերի հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ. հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմայի անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է <<կամ համարժեք>> արտահայտությունը, ՀՀ գնումների մասին օրենքի սահմանված պահանջներին համապատասխան:
Հրավերում նախատեսված է առավելագույն քանակներ:
Մատակարարումը կատարվելու է ըստ եռամսյակների, եռամսյակի հինգերորդ աշխատանքային օրը, ժամը 9,00-16,00-ը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ | «Վիոլա» ՍՊԸ |
| Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 | Ք.Երևան, Ավան, Աճառյան փ. |
| <Ինեկոբանկ>Վանաձոր մ/ճ | 2-րդ նրբ. թիվ 3 |
| Հ/Հ 2050223000451001 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 06907013 | ՀՀ 1570001092880100 |
| Տնօրեն՝ Վ.Ս. Օհանյան | ՀՎՀՀ 00801026 |
| | Տնօրեն՝ Ա.Մեժլումյան |
| ստորագրութ յուն Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 2
« 10 » 01 2020 թ. կնքված
Վ 1ՊԳՀՄԲՖ-20/2 -2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33691162 | ԱԼ ԱՏ-ի հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 3 | 33691162 | ԱՍԱՏ-ի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 8 | 33691162 | Հեմոգլոբին | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 9 | 33691162 | Ալֆա ամիլազի որոշման համար նախատեսված հավաքածու Kinetic | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 10 | 33691162 | Կետոնների որոշմոն թեստ | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 11 | 33691162 | Տրիգլիցերիդներ | % | 9% | 18% | 24% | 36 | 45% | 54% | 63 | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | % | | | % | | | | | |
| 12 | 33691162 | Թիրեոտրոպհորմոնի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 13 | 33691162 | Ընդհանուր սպիտակուց | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 14 | 33211120 | Գլյուկոզայի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 15 | 33211140 | Բիլիռուբինի (ընդհանուր) որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 16 | 33211150 | Միզանյութի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 17 | 33211160 | Կրեատինինի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 22 | 33211230 | Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 25 | 33211300 | Խոլեստերին | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 26 | 33211300 | Կալցիում | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 27 | 33211310 | Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 33 | 33691162 | TSH որոշման թեստ-հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 34 | 33691162 | T4 որոշման թեստ-հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 35 | 33691162 | Ազատ Թիրոքսին T4 free քանակական որոշման թեստ-հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 | 45% | 54% | 63 | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | % | | | % | | | | | |
| 36 | 33691162 | Ազատ 3,5,3 - Տրի յ ոդթիրոնին T3 քանակական որոշման թեստ-հավաքածու | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |
| 37 | 33691162 | Թիրոիդ պերոքսիդազի նկատմամբ հակամարմիններ: | % | 9% | 18% | 24% | 36 % | 45% | 54% | 63 % | 72% | 81 % | 90% | 100 % | 100 % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17
<Ինեկոբանկ>Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050223000451001
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Վ.Ս. Օհանյան

_____ Կ.Տ
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

«Վիոլա» ՍՊԸ
Ք.Երևան, Ավան, Աճառյան փ.
2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա.Մեժլումյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ